

րին սովորաբար մեկ քաշէն աւելի բեւեռ կուտայ. եւ ամեն մեկ քաշին մէջ տասուերկու հազար բեւեռի չափ կըլլայ :

Մեխակը ծխով կամ արեւու մէջ կըջորցընեն : Երբոր ծխով չորցուի, բոլորովին կըսեւնայ, ու եղը կըցամքի. իսկ արեւու մէջ որ չորնայ, այնչափ չսեւնար, եւ ամենեւին եղը չկորսնցընէր, եւ ասանկ են Հնդկաստանէն եկածները, որ աւելի յարգի են :

Երբոր ձագախոտին ծաղիկները մոռցուին կամ կամաւ բողբոլին, պտուղ մը կուտան որ ՄԵՆԱԿԱՊՏՈՒՂ կըսուի. երկայնաձեւ է ու սեւեակ, եւ մէջը խժային նիւթէ ձուածեւ կարծր ու սեւ նուշ մը ունի, որ բեպեռեւ անոյշ կընոտի, բայց բեւեռներուն չափ սաստիկ չէ հոտը : Թարմ եղած ժամանակը Հոյանտացիք շաքարով կեփեն ասիկայ ու կերակուրէ ետքը կուտեն իբրեւ մարսեցուցիչ :

Ձագախոտին ամեն մասունքը բանի կուգան տնական տնտեսութեան, արհեստից, բժշկութեան, իւղագործութեան եւ ըմպելեաց մէջ :

Փայտը, մանաւանդ վայրի ձագախոտինը կարծր է, պինդ եւ ծանր. գոյնը կարմրախայտ մոխրագոյն, կեղեւը գորշախառն, միահարթ եւ լերկ. քէ ատաղձագործութեան եւ քէ արուեստից մէջ կըգործածուի : Բժշկութեան մէջ կեղեւէն զատ՝ տերեւն ալ կըգործածուի, որ կարծր է, մութ կանանչ, հոտն ակործելի, եւ սաստիկ համեմիչ :

Ծաղկին կորերը որ ՃԻՐԱՆԲ ՄԵՆԱԿԻ կըսուին, բարակ են, բազմաճիւղ, գորշախառն, սաստիկ կընոտին, եւ իւղագործութեան մէջ կըգործածուին :

Ամեն տեղ իբրեւ համեմ խոհակերոցներու մէջ կըգործածուի մեխակը, եւ մանաւանդ Արեւելք, իսկ Եւրոպայի մէջ քանի կերբայ կըպակսի տաքցուցիչ ու պնդացուցիչ բնութեանը համար : Մեխակի իւղն ալ քէ իբրեւ անուշահոտութիւն կըգործածուի, եւ քէ փատած կամ ցաւած ակոտներու դեղ, որ վրանին դրուելով ցաւած ջիղը կայրէ ու ցաւը կանցընէ. բայց զգուշանալու է որ քովի ողը ակոտներուն չըղպչի, վասն զի կրնայ փտութիւն պատճառել :

րացկան մը տեսեր է ոտքերը աղտոտ ցեխոտ եւ հագուստը պատրուած : Մօտեցեր անոր ու — Աստուած քեզի բարի լոյս պարգեւէ, ըսեր է : — Բարի լոյս, կանչէր է մուրացկանը. չար լոյս երբէք չեմ ունեցեր որ Աստուած այսօր բարին տայ ինծի : — Ինչո՞ւ այսպէս պատասխան կուտաս, կրկներ է Թուլէր. լաւ է ուրեմն, Աստուած գքեզ երջանիկ ընէ : — Այս խօսքերդ ինչ կընշանակեն. ես ոչ երբէք դժբախտ ապերջանիկ եղեր եմ :

Թուլէր աղքատին այս խօսքերուն վրայ զարմացած կաղաչէ որ միտքը աւելի լաւ բացատրէ :

— Գլխուս վրայ, կըսէ անիկայ : Ինծի բարի լոյս մաղբեցիր, եւ ես հրամանոցդ գրուցեցի որ ոչ երբէք չար լոյս ունեցեր եմ : Երբոր անօթի կըմնամ՝ զԱստուած կօրհնեմ. երբոր կըմբսիմ, երբոր անձրեւ կուգայ, ձիւն կիջնայ, գլխուս վրայ կարկուտ կըբափքըփի, երբոր օղը բաց կամ գոց է՝ զԱստուած կօրհնեմ. երբոր խեղճ արհամարըում, անօգնական ու անխնամ երեսի վրայ կըմնամ՝ դարձեալ զԱստուած կօրհնեմ : Ասոր համար երբոր ինծի երջանկութիւն մաղբեցիր, պատասխան տուի քէ ոչ երբէք դժբախտ եղեր եմ, վասն զի միշտ շանացեր եմ Աստուծոյն իմոյ կամքը կատարել, եւ բոլոր իմ կամքերս անոր կամացը համաձայնել, որպէս զի ինչ որ ինքն ուզէ՝ ես ալ նոյնն ուզեմ :

— Բայց ինչ կընես քէ որ Աստուած գքեզ դժոխք իջեցընէ :

— Զիս դժոխք իջեցընէ, կըպատասխանէ մուրացկանը. քէ որ այնպիսի բան մը ընէ, երկուքեւ ունիմ, անոնցմով զինքը կըգրկեմ, որոց մէկը խոնարհութիւնն է եւ միւսը սէր. եւ այսպէս զինքը պինդ գրկելովս պետք է որ ինքն ալ հետս դժոխք իջնայ, ուր աւելի երջանիկ կըլլամ իրեն հետ՝ քան քէ առանց իրեն արքայութեան մէջ :

ՔԱՂԱՔԱՎԱՐՈՒԹԻՒՆ

(Շարայարութիւն. Տես էջ. 41. 105.)

Գ.

ՈՒՐԻՇԻ ԱՆՀԱՆԳՍՏՈՒԹԻՒՆ ՊԱՏՃԱՌՈՂ ԲԱՆԵՐՈՒ ՄԷՋ ԱՆՋԳՈՒՇՈՒԹԻՒՆ.

1. Սաստիկ ու բարձրաձայն կըփոնգտայ, եւ բերանը բաշկինակովը չգոցելով՝ վրան գլուխն ու բոլոր քովինները քքով ու խլինքով կըլեցընէ :

2. Քովը կեցողին երեսն ի վեր կընազայ՝ առանց բերանը ձեռքովը գոցելու : Յաճ ձայնով խօսելու տեղ կըպոռայ կըպոռալտայ :

3. Բազմութեան մէջ քրին տակէն կերգէ, կը-

ՁՈՐԵՔՏԱՍԱՆԵՐՈՐԳ ԴԱՐՈՒՆ ՄԷՎ ՄՈՒՐԱՅԿԱՆԸ.

Յովհաննէս Թուլէր, անուանի դոմինիկեան կրօնաւորը որ 1379ին վախճանած է, կըպատմէ քէ օր մը եկեղեցւոյ մէկուն դրան առջնը մու-

սույէ եւ կամ մատուրներուն ձայն հանել կուտայ, որով ընկերութենէն ձանձրանալը ամենուն կը-
յայտնուի :

4. Երբոր զինքը նստելու հրամցընեն, ամենէն
լաւ արողը կընտրէ, քաշկըռտելով կըբերէ եւ
ուրիշներուն արգելք եղող տեղ մը կըղնէ :

5. Մէկու մը հետ խօսած ժամանակը կերթայ
քիբը կըմտնէ ու շնջովը երեսը կըլեցընէ : Ան-
դադար ճրագին առջեւէն կանցնի կըղառնայ, եւ
կամ կերթայ դիմացը կընստի ու ամենուն լոյսը
կըխափանէ :

6. Յանկարծակի ճրագը մէկուն աչքին կըմօ-
տեցընէ կամ կըհեռացընէ :

7. Քովի կեցողին երեսն ի վեր փչելով ճրագը
կըմարէ :

8. Ձեռքը քթախոտի բուփ որ անցնի, կըբա-
նայ կըփչէ ու աչքը քթախոտով կըլեցընէ :

9. Կրակն անանկ կըփչէ որ աչքը՝ վրադ
գլուխդ մօխրով ու ծխով կըլեցընէ :

10. Ախոռ կերթայ ու վրան գլուխը հոտեցընե-
լով վեր կեցէ, բոլոր տունը զարշահոտութեամբ
կապականէ :

11. Մագերը քովինին աչքը խորելու պէս կը-
մօտենայ անոր :

12. Քովիններուն վրայ կըկորընի ու չմտածեր
որ զանոնք կըյոգնեցընէ :

13. Քովինները կըհրէ կըհրմըշտըկէ : Տան մէջ
քայլած ժամանակը սաստիկ ուժով կըկոխէ ու
ոտքին անախորժ ձայնովը զամենքը անհանգիստ
կընէ :

14. Առանց զգուշութեան կան կարասեաց վրայ
կորընելով զանոնք կաւրէ կամ կաղտոտէ :

15. Ուրիշի առջեւ անդադար բարձր ձայնով
քիբը վեր կըքաշէ, ասդին անդին կամ կրակի
վրայ կըբքնէ ու բնաւ չմտածեր որ կընայ դիմա-
ցինին սիրտը խառնուիլ :

16. Պատուհանէն վար կըբքնէ, ջուր եւ ուրիշ
բան կընետէ ու չմտածեր որ կընայ անցնողներէն
մէկուն գլուխը գալ :

17. Ուր որ կըմտնէ դռները բաց կըբողու, եւ
միշտ ետեւէն մէկը պէտք է որ զանոնք գոցէ.
չգիտեր որ մարդ դռները գտածին պէս պէտք է
բողու, բաց գտաւ նէ՝ բաց, գոց գտաւ նէ՝ գոց :

18. Խօսակցութեան մէջ ամենեւին գէշ ու
սխալմիտ խօսելէն չզգուշանար :

19. Շէնքով շնորհքով բարեւ տալ անգամ չգի-
տեր. բարեւ տամ ըսելով շանը բաքին վրայ կը-
կոխէ, քովի կեցողը կըհրէ, արողը կըշրջէ եւ
կամ ետին կեցող տղան գետին կըձգէ :

ԲԱՆԱԼԻ ԲՆԱԿԱՆ ԳԻՏԵԼԵԱՅ .

(Շարադարութիւն. Տես էջ 18, 43, 67.)

Ինչէն է որ բաց տեղ փռուած լաթերը աւելի
շուտ կըջորնան քան թէ գոց սենեկի մը մէջ
փռուածները :

— Վասն զի հովէն կաւուրի կերթայ բաց լաթե-
րուն խոնաութիւնը, եւ շոգիացումը դիւրաւ
կըլլայ :

Ինչո՞ւ համար է որ շոգիացումը խիստ շուտ
կըլլայ բարձր լեռներու վրայ :

— Վասն զի բարձր լեռներուն օդը աւելի նոսր
է քան թէ դաշտերուն երեսի օդը :

Ինչէն է որ երբեմն անտառի մը ծառերուն
տակի խոտերը դաւար մնացած կըլլան, մինչդեռ
անդին դաշտերուն մէջի կամ բաց լեռներուն
վրայի խոտերը չորցեր են :

— Վասն զի Ա., ծառերուն բարձր ճիւղերն ու
տերեւները չեն բողուր որ արեւը հոն զարնէ եւ
շոգիացումը սաստկանայ .

Բ., ծառերուն տերեւները այնպէս կըծածկեն
տակի խոտերն որ այն տեղի օդը դժուարաւ կը-
փոխուի, եւ գրեթէ միշտ լեցուն է խոնաութեամբ :

Ինչէն է որ խորունկ ձորերը, շտեմարանները
եւ ուրիշ գետնափոր տեղուանք միշտ խոնաւ են :

— Վասն զի Ա., արեւուն ճառագայթները
անոնց մէջ չեն զարնէր .

Բ., անոնց մէջի օդը դժուարաւ կըփոխուի .

Գ., Այն օդը միշտ շոգիով լեցուն է :

Ինչէն է որ պարտիզպաններուն այլ եւ այլ բու-
սոց վրայ դրած ապակիէ անօրներուն տակի հողը
խոնաւ կըլլայ, մինչդեռ անոնց քովերուն հողը
չոր ու փխրուն է :

— Վասն զի ապակին ջրողուր որ գետնին շո-
գիացմամբը եւ մանաւանդ մէջի բոյսերուն ար-
տաշնջութեամբը ձեւացած գոլորշին դուրս ելլէ :

Ինչէն է որ ամառները շատ անգամ ջրամբար-
ները կըցամքին :

— Վասն զի անոնց ջրոյն շոգիացումը շուտ
շուտ կըլլայ՝ Ա., արեւուն ճառագայթից տաքու-
թենէն .